# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մաղաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 41 -Ա

<<27>> մարտի 2025 թվական          քաղաք Մարալիկ

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԵՐԿՈՒ ԿՏՈՐ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ, ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի, 48-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ մասերի, 76-րդ հոդվածի 1-ին, 3-րդ մասերի, 78-րդ հոդվածի 3-րդ մասի, 81-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին
որոշում է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Շիրակավան բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, համայնքի սեփականություն հանդիսացող սույն որոշման հավելվածում նախատեսված գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող հողատեսքի երկու կտոր հողամասերը, գյուղատնտեսական գործունեություն ծավալելու նպատակով, բաց մրցույթով, հրապարակային սակարկությունների միջոցով տրամադրել վարձակալության:

2. Հաստատել հողամասի վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրման մրցույթի պայմաններն ու վարձավճարի մեկնարկային չափերը՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ

| | Կողմ՝11 | դեմ՝0 | ձեռնպահ՝0 |
|---|---|---|---|
| Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Է. ՈՒԽՌՈՒՏՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Ա. ՇԱԲՈՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Հ. ՋԱՏԻԿՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Ժ. ԱԼԵՔՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Ն. ՍԱՐՈՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Գ. ՀԱԿՈԲՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |
| Գ. ՊՈՂՈՍՅԱՆ | -------------- | -------------- | -------------- |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ

<<27>> մարտի 2025 թ.
քաղաք Մարալիկ

ՀԱՎԵԼՎԱԾ
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի
Անի համայնքի ավագանու 2025 թվականի
մարտի 27-ի N 41-Ա որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՇԻՐԱԿԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՎԱՐԵԼԱՀՈՂ ՀՈՂԱՏԵՍՔԻ ԵՐԿՈՒ ԿՏՈՐ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹՈՎ, ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ, ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ

| N | Հողամասի գտնվելու վայրը | Հողամասի կադաստրային ծածկագիրը/ Վկայական N | Հողամասի նպատակային նշանակությունը | Հողամասի հողատեսքը | Հողի որակական հատկանիշները /ջրովի/անջրդի, հողի կարգ/ | Հողամասի մակերեսը (հա) | Օգտագործման տրամադրման նպատակը | Հաղորդակցուղիների առկայությունը | Հողամասի նկատմամբ սահմանափակումների (ներառյալ՝ սերվիտուտների) առկայությունը | Մրցույթի ձևը | Վարձակալության ժամկետը (տարի) | Հողամասի մեկ տարվա վարձավճարի մեկնարկային չափը (ՀՀ դրամ) | Մրցույթի մասնակցության նախավճարի չափը (ՀՀ դրամ) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Շիրակավան վարելահող | 08-090-0250-0074 24102013-08-0027 | Գյուղատնտեսական | Վարելահող | Անջրդի IV կարգ | 0.40497 | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Ապահովված է դաշտամիջյան ճանապարհով | Արգելվում է հողամասում որևէ կառուցապատում իրականացնելը և հողատեսքը փոփոխելը | Բաց, հրապարակային սակարկություն | 10 | 3000 | Մրցույթի առարկայի մեկնարկային գնի 5 տոկոս |
| 2. | Մարզ Շիրակ, Անի համայնք, գյուղ Շիրակավան վարելահող | 08-090-0250-0067 24102013-08-0002 | Գյուղատնտեսական | Վարելահող | Անջրդի IV կարգ | 0.695653 | Գյուղատնտեսական գործունեության ծավալում | Ապահովված է դաշտամիջյան ճանապարհով | Արգելվում է հողամասում որևէ կառուցապատում իրականացնելը և հողատեսքը փոփոխելը | Բաց, հրապարակային սակարկություն | 10 | 5000 | Մրցույթի առարկայի մեկնարկային գնի 5 տոկոս |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ — Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ